

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

**ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ
ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԶԱՆՔԵՐՈՎ****DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.167****ԱՄՓՈՓՈՒՄ**

Արշակ Չոպանյանը իր ողջ կյանքը նվիրել է հայ գրականությունը աշխարհին ներկայացնելու կարևորագույն գործին: Առանձին գրքերով ֆրանսերենով հրատարակել է հայ ժողովրդի պատմությանն ու գրականությանը նվիրված գրքեր: Նրա “La Roseiraie d’ Arménie” երեք հատորները ամփոփում են հայ միջնադարյան քնարերգության հիմնական գանձերը: Այդ գրքից առաջ նա ֆրանսերենով հրատարակել է «Հայ աշուղներ» գիրքը, որից մեծապես օգտվել է Վալերի Բրյուսովը իր “Поэзия Армении” չինացող հատորը կազմելիս: Բրյուսովը հաճախ նույնությամբ կրկնում է հայ միջնադարի քնարերգուներին տված Արշակ Չոպանյանի գնահատականները:

Չոպանյանը հայոց ցեղասպանության դատապարտման գործում հսկայական ծառայություն է մատուցել: Նա 1945-ին առանձին գրքույկով հրատարակել է հայոց ցեղասպանության սոսկալի դրվագները պատկերող օտարազգի ականատեսների վկայությունները:

Արշակ Չոպանյանն ապացուցել է, որ Քուչակյան հայրենների հեղինակները կամ անհայտ են կամ տարբեր դարերի հայ քնարերգուներ են:

Նա հիանալի գիտեր համաշխարհային գրականությունը և այդ տեսադաշտով է գնահատում հայ միջնադարը, արևելահայ ու արևմտահայ գրողներին: Չոպանյանի՝ հայ գրողներին տրված գնահատականները

ելակետային են հետագա դարերի գրականագետների, պատմաբանների, արվեստագետների համար:

Քանալի բառեր և արտահայտություններ. Ա. Չոպանյան, ցեղասպանություն, հայ քնարերգություն, թարգմանություն, հայրենասիրություն, միջազգային արժեք, Ա.Ֆրանս, Շ.Դիլ, Ա.Մեյե:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արշակ Չոպանյանը (1872-1954թթ.) ծնվել է Պոլսում, սակայն իր գիտակցական կյանքի առաջընթացը լիովին կապված է աշխարհի նշանավոր գիտական ու մշակութային կենտրոններից մեկի՝ Փարիզի հետ: Չոպանյանը գրող էր, լրագրող, հրատարակիչ, թարգմանիչ, գեղագետ, գրաքննադատ:

Երկու կարևոր նախապայմաններ նպաստել են Չոպանյան երկույթի կազմավորմանը: Նա հիանալի ձևով ուսումնասիրել էր հայ ժողովրդին անցած պատմական ուղին և նրա հոգևոր մշակույթը ու երկրորդ՝ քաջատեղյակ էր աշխարհի հին ու նոր քաղաքակրթությանը:

Անսահման նվիրումը սեփական ժողովրդին առավել նոր թափ ստացավ 1915 թ. ցեղասպանությունից հետո՝ նոր ցավալի, սակայն ցնցող խթան դառնալով աշխարհին ներկայացնելու իր ազգի հոգևոր հարստությունը և առաջին հերթին՝ գրականությունը: Իսկ դա կարելի էր անել միայն թարգմանությունների միջոցով: Հայկական հարցը, հայ գրականության երևելի դրսևորումները Չոպանյանն աշխարհին ներկայացնում է ֆրանսերենով: Դրանք առաջին հերթին կապվում էին համիդյան ջարդերի հետ: Այդ կարգի ֆրանսերեն հրապարակումներից ամենաակնառուն լույս է տեսել Փարիզում 1897-ին՝ հետագայում Նոբելյան մրցանակի դափնեկիր (1923թ.) Անատոլ Ֆրանսի առաջաբանով: Այդ գրքին, որը կոչվում է “L’Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient”, նախորդել է գիտաժողով, որը նախագահել է Անատոլ Ֆրանսը:

Իր երկարատև վաստակաշատ, հիացմունքի արժանի բեղմնավոր գործունեության ընթացքում Չոպանյանն աշխարհին ներկայացրեց հայ ժողովրդի

հոգևոր հարստությունը: Այս առումով խիստ արժեքավոր է 1945-ին լույս տեսած “La nation arménienne et son œuvre cultureele” աշխատությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հիմքում ընկած է պատմահամեմատական մեթոդը, որը կիրառվել է Արշակ Չոպանյանի ֆրանսերենով տպագրված աշխատությունների միջազգային արժեքը ներկայացնելու նպատակով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայ գրողների երկերը Չոպանյանի թարգմանությամբ

Չոպանյանը քաջատեղյակ էր հայ ժողովրդի ծանր վիճակին Թուրքիայի լծի տակ: Աբդուլ Համիդի կազմակերպած հայերի կոտորածները ցնցեցին երիտասարդ հայ մտավորականին ու Ֆրանսիայի, նաև Եվրոպայի առաջադիմական ուժերին ի նպաստ՝ հայ ժողովրդի իրավական շահերի ուշադրությունը գրավելու համար: Չոպանյանը 1897-ի մարտի 9-ին կազմակերպում է մի կարևոր գիտաժողով Աշխարհագրական միության սրահում: Գիտաժողովը նախագահում էր Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Անատոլ Ֆրանսը:

Չոպանյանի զեկուցումը հայ ժողովրդի պատմության և հայ գրականության մասին սկսվում է հնագույն ժամանակներից՝ Հայկ Նահապետից ու հասնում է մինչև XIX դարի վերջը: Հենվելով պատմահայր Խորենացու ընձեռած փաստերի վրա՝ Չոպանյանը ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունը մինչև Ոսկեդարի կեսերը. հիմնականում օգտվել է Միքայել Չամչյանցի «Հայոց պատմության» հատորներից: Նա հայ գրականությունը ներկայացնում է գողթան երգերից և հասնում է մինչև XIX դարի գրողները՝ թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ հատվածների: Հիանալ կարելի է՝ տեսնելով հայ երիտասարդ գրողի, հայ մտավորականի քաջաճանոթ լինելը Հայաստանի երկու հատվածների նշանավոր գրողների ստեղծագործություններին ու պարբերական մամուլին:

Անատոլ Ֆրանսը հիացմունքով է խոսում Չոպանյանի զեկուցման մասին, որն իրենց ներկայացրեց Արևելքի մի տառապած, սակայն իմաստուն, խելացի

ազգի հոգևոր հարստությունը. այդ ազգի մտքի արդյունքն են դարձել նրա գաղափարները արդարության ու ազատության մասին (**L'Arménie..., 1897**):

Սա սկիզբն է Չոպանյանի՝ Հայաստանն ու հայ գրականությունն ու մշակույթը աշխարհին ներկայացնելու վսեմ առաքելության: Սա մի սրբազան գործ էր, որի պահանջը դրել էր Չոպանյանի համար պաշտելի Խաչատուր Աբովյանը: Ահա թե ինչպես է նա սպառնալիչ ձևով բնութագրում Աբովյանի պատմական դերը. «Պահպանում ու զարգացում հայ ցեղին, հայ լեզվին, հայ գրականության, մուտքը հայ տարրին եվրոպական քաղաքակրթության մեջ, ահա ճամփան, զոր Աբովյան կցուցաներ: Իրմե ի վեր հայ ժողովուրդը քալեց այդ ճամփեն ու բավական առաջացավ: Եվ Աբովյան արժանիքն ունի այդ ճամփան առաջին ու դժնդակ ճիգով մը բացողներեն մին եղած ըլլալու» (**Չոպանյան Ա., 1988**):

1902-ին է լույս տեսել Չոպանյանի հրաշալի թարգմանությամբ իրականացած “Poèmes Arméniens, Anciens et Modernes” գիրքը, որի առաջաբանը գրել է ֆրանսիացի վիպասան, դրամատուրգ, էսսեիստ, բանաստեղծ, գրաքննադատ, թարգմանիչ Գաբրիել Մուրեն (1865-1943թթ.): Այս գրքում ներկայացված են նաև հայ ժողովրդական բանահյուսության քերթվածներ:

Մուրեն գրքի ծավալուն առաջաբանում քաղվածքներ է բերում եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններից Հայաստանի մասին: Հարի Ֆինիս Բլուս Լինչը (1862-1913թթ.)՝ անգլիացի ճանապարհորդն ու աշխարհագետը, գրում է, թե հայերն անմիջապես յուրացնում են եվրոպական մշակույթի նորությունները այնքան անհագ և կատարյալ ձևով, որի նմանը չունի Հնդկաստանից մինչև Միջերկրականն ընկած տարածքի ոչ մի ազգ (**Poèmes..., 1902**): Նա հիշեցնում է Լամարտինի խոսքը, ըստ որի նա սիրում է հայերին, որովհետև նրանք Արևելքի պատվավոր ու գրասեր ժողովուրդն են (**Poèmes..., 1902**):

Նա հիացմունքով է խոսում Ներսես Շնորհալու «Առաւօտ լուսոյ» շարականի մասին, իսկ Գրիգոր Նարեկացու «Մեղեդի ծննդեան» քերթվածի Աստվածամոր հիասքանչ գեղեցկությունը համեմատում է Բոսիչելիի Վեներայի հետ:

Ներկայացնելով թուրքական կառավարության կազմակերպած ջարդերը՝ Մուրեն հիշատակում է նաև Զեյթունի ու Սասունի հերոսական մարտերը: Նկարագրում է Երևանի բերդը ըստ Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի, որի գրավումով Հայաստանն ազատագրվում է պարսկական լծից: Նա չի մոռանում իր հիացմունքն արտահայտել Վարդան Մամիկոնյանի Ավարայրի ճակատամարտին մասնակցած հայ կանանց (**Poèmes..., 1902**):

Հատուկ կանգ է առնում Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու ճարտարապետական հիասքանչ արվեստի վրա: Այն կառուցվել է X դարում և զարդարված է իրական ու Աստվածաշնչային կյանքի պատկերների որմնաքանդակներով:

Գրքում միջնադարի դասական հեղինակների քերթվածների թարգմանությունների սկզբում տրվում է խիստ սեղմ բնութագիր տվյալ հեղինակի: Գրիգոր Նարեկացու մասին Չոպանյանը գրում է. «Գրիգոր Նարեկացի, X դարի վանական, հայ ամենաականառու միստիկը (խորհրդապաշտ): Նրա «Մատենանոցերգութեանը» շարահարություն է չափաբերական արձակ աղոթքների, որը հայ քնարերգության հատուկ ամենաբնորոշ գլուխգործոց է» (**Poèmes..., 1902**):

XIX դարում Եվրոպայում՝ հատկապես Գերմանիայում, մեծ հետաքրքրություն առաջացավ ժողովրդական բանահյուսության նկատմամբ, որին հետևեց բանահյուսական երկերի հիման վրա ստեղծված դասական գրողների գլուխգործոցների երևան գալը: Այդ երևույթը շարունակվեց մինչև XX դարի կեսերը: Հայ մատենագրության մեջ բանահյուսական գրական երկերի օգտագործումը ավանդույթի ուժ դարձրին հատկապես Ոսկեդարի պատմիչներ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին:

Հայ ժողովրդական բանահյուսական հյուսվածքների արժեքը նեղ ազգային սահմաններից դուրս է: Այդ գիտակցումով էլ 1903-ին ֆրանսերենով թարգմանաբար ներկայացնում է ժողովրդական չափածոյի մի ընտրանի “Chants populaires Arméniens” խորագրով: Գրքի առաջաբանի հեղինակն է ֆրանսիացի սիմվոլիստ և վիպասան Պոլ Ադամը (1862-1920թթ.):

Չոպանյանը ներկայացնում է հայ բանահյուսության հոյակապ գանձարան՝ տասնյակ բաժիններով: Այդ բաժիններում ներկայացվում են սիրո երգեր, պատմական բնույթի չափածո քերթվածներ, պանդուխտի երգեր, ռազմահայրենասիրական հյուսվածքներ, որոնցում տեսնում ենք հայ ժողովրդի ընդվզումները թուրքական լծի դեմ: Դրանք ներկայացնում են խիզախ զեյթունցիներին, Սերոբ Աղբյուրին և նման հայրենասերներին: Կան երգիծական ոտանավորներ, սգո երգեր, հոգևոր երգեր, խառը երգեր: Պոլ Ադամը այդ երգերում տեսնում է գերմանացի նշանավոր փիլիսոփա Կանտի՝ կյանքի ճանաչողության դրսևորումները, որոնք ձևավորվել են հայերի դարավոր քաղաքակրթության ընթացքում (**Chants..., 1903**):

1906-ին էլ լույս տեսել “Les Trouvères Armeniens” ժողովածուն, որը սկսվում է Նահապետ Քուչակով ու ավարտվում աշուղ Զիվանու երգերով: Այս գիրքը խիստ արժեքավորել է Վալերի Բրյուսովը և այն լայնորեն օգտագործել իր “Поэзия Армении” ժողովածուում (**Poezia..., 1987**):

Նա ասում է, որ իր ժողովածուի տեսական հատվածի փաստերը և որոշ բանաստեղծությունների թարգմանությունները քաղել է Չոպանյանի «Հայ ժողովրդական երգեր», «Հայ աշուղներ», «Հայաստանը, նրա պատմությունը և գրականությունը», «Զեյթուն» գրքերից:

“Les Trouvères Arméniens” գրքի առաջաբանում Չոպանյանը ներկայացնում է անգլիացի նշանավոր գրող, պետական գործիչ Զեյմա Բրայսի կարծիքն իր շարադրած «Հայ ժողովրդական երգեր» գրքի վերաբերյալ: Այդ երկը ֆրանսիական Ակադեմիայի կողմից արժանացել էր մրցանակի: Զեյմա Բրայսը գրում է. «Շատ կտորներ ունեն մեծ գրավչություն և թարմություն, ազգային տարբերակիչ մի քանի բնույթով, որոնք նրանց տալիս են առեղծվածային բնույթ. նրանցում կա արևելյան ճաշակ. այս քնարերգությունն ամբողջովին տարբեր է արաբականից ու պարսկականից» (**Les Trouvères, 1906**):

Չոպանյանի կարծիքով Կիլիկյան թագավորության ժամանակ կիրթ խավի խոսակցական հայերենը, որն օգտագործվում էր գուսանների կողմից, սկսեց

դիտվել որպես գրական լեզու: Մեծ Հայքում, ուր ձևավորվել էր դասական հայերենը՝ գրաբարը, այդ լեզվով գրում էին միայն հոգևորականները, որովհետև եկեղեցու պաշտոնական գրոց լեզուն էր:

XII դարում Կիլիկիայում Հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին, որն այդ ժամանակահատվածի կարևորագույն մատենագիրներից էր, իր գործերը գրում էր գրաբարով, սակայն ժողովրդի համար գործածում էր խոսակցական հայերենը և հենց այդ լեզվով գրեց իր հանելուկները, որոնք հորինել էր ժողովրդական հավաքներում օգտագործելու համար:

XIV դարում միջին հայերենը գերիշխող լեզու էր ոչ միայն Կիլիկյան Հայաստանում, այլև Մեծ Հայքում: Վարդան Արևելցու «Տիեզերական պատմութիւն» և Մաղաքիա Աբեղայի «Պատմութիւն վասն ազգին նետողաց» երկերում զգացվում է խոսակցական լեզվի հույժ ներգործությունը գրաբարի վրա:

Չոպանյանը նկատում է, որ 14-րդ դարի բանաստեղծ Կ.Երզնկացին գրում էր խոսակցական լեզվով և բացահայտում է կրթված բանաստեղծների լեզվական հարստության գաղտնիքը: Նրանք, գրելով խոսակցական լեզվով, օգտվում էին գրաբարյան բառազանձից և քերականական ձևերից: Նրանց ոճի մեջ զգալի է Աստվածաշնչի և նախորդ դարերի հայ հեղինակների լեզվաոճական բարերար ազդեցությունը:

«Հայ աշուղներ» ժողովածուի մեջ Ա.Չոպանյանը պատվավոր տեղ է հատկացրել Սայաթ-Նովային: Նրա կարծիքով Սայաթ-Նովան ծնվել է Թիֆլիսում, 1712-ին: Չնայած հայրը նրան ջուլիակի աշակերտ է դարձրել, սակայն այդ արհեստը չի եղել Սայաթ-Նովայի հետագա կյանքի հեռանկարը: Պատանի հասակից նա ջերմ սեր է ցուցաբերում աշուղության նկատմամբ և սովորում նվագել մի շարք գործիքներ՝ քամանչա, չոնգուր, տամբուրե, որոնք Կովկասի և Փոքր Ասիայի աշուղների գործիքներն էին: Սայաթ-Նովան դառնում է հռչակավոր աշուղ և հավասարապես երգեր է գրում երեք լեզուներով՝ հայերեն, վրացերեն, թուրքերեն: Նա հաճախ էր երգում Հերակլ Երկրորդի պալատական խնջույքներում:

Ա.Չոպանյանը Գևորգ Ախվերդյանին համարում է առաջին սայաթնովագետը, որը 1852-ին Մոսկվայում հրատարակում է Սայաթ-Նովայի հայերեն խաղերը՝ գրված թիֆլիսահայ բարբառով՝ կցելով գիտական ընդարձակ առաջաբան: Ա.Չոպանյանը նշում է, որ Սայաթ-Նովայի խաղերի նյութը հիմնականում սերն է, նա ունի նաև խոհական բանաստեղծություններ: Ա.Չոպանյանի համար իսկական բանասիրական գյուտ են դարձել Նաղաշ Հովնաթանը և նրա նկարչական գերդաստանը: 1910-ին Փարիզում այդ մասին նա հրատարակում է նոր գիրք: Չոպանյանն իրավացիորեն նկատում է, թե հայերը հաճախ տրտնջում են, որ իրենց նախնիները քիչ բան են թողել, աղքատիկ է նրանց թողածը և արվեստով միօրինակ: Սակայն, երբ անցյալի մեջ որոնումներ են կատարում, պարզվում է, որ բողոքելու առիթ ունեն ոչ թե նոր սերնդի հայերը, այլ նրանց նախնիները: Չոպանյանը բացատրում է, որ բանաստեղծ ու նկարիչ Ն.Հովնաթանի մասին շատ բան չգիտի, Հովնաթանյան նկարիչների մասին՝ նույնպես: Ինքը Նաղաշի տաղերին ծանոթացել է 1898-ին, երբ Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրերն էր թղթատում: Փարիզում Վարդգես Սուրենյանցը և Փանոս Թերլեմեզյանն իրեն հայտնել են, թե Նաղաշը որմնանկարել է Ս.Էջմիածնի Մայր տաճարը: Ա.Չոպանյանը Նաղաշի որդու՝ Հակոբի հոր մահվան առիթով գրած ողբի հիման վրա ստեղծում է բանաստեղծ-նկարչի կենսագրությունը: Ն.Հովնաթանը ծնվել է 1661-ին և վախճանվել 1722-ին: Նա ասում է նաև, որ Հովնաթան Հովնաթանյանը նշանավոր տաղերգուի թոռն է և անվանի նկարիչ է եղել:

Ուսումնասիրության սկզբում Ա.Չոպանյանը ներկայացնում է Նաղաշ Հովնաթան բանաստեղծին: Ըստ նրա որդու՝ Հակոբի «Ողբի»՝ Հովնաթանը ճամփորդած պետք է լինի Պարսկաստան, Թուրքիա, Եվրոպա, նա իր ժամանակին «...հեղինակավոր բանաստեղծ մարդու պատկառելի դիրք մը ունեցած է, ողջմիտ, սրախոս մարդ, ավանդասեր, բայց ոչ տիրացու, ընդհակառակը, տիրացուական բարքերուն, տգէտ կրոնամոլութեան, փնթի ու

ստրուկ տէրտէրականութիւն ասող ու հեգնող, ինչպէս կը տեսնենք «մոնթերու» մասին կծու երգիծաբանութենէն» (**Դոլուխանյան Ա., 2004**):

Չոպանյանը համեմատական քննությամբ Նաղաշ Հովնաթանին զուգադրում է Ն.Քուչակի և Սայաթ-Նովայի հետ: Նա իրավացիորեն երկուսին էլ առավել գերազանց է համարում Նաղաշ Հովնաթանից: Քուչակն առավել է իր բանաստեղծական ներշնչման այլազանությամբ, գաղափարների նորարարությամբ և ճոխությամբ, ոճի գերագույն սեղմությամբ ու նրբությամբ, ունի զգացման ներուժ և բացատրության չքնաղ գյուտեր: Սայաթ-Նովան էլ իր հերթին բանաստեղծական ավելի կատարյալ երևույթ է, քան Հովնաթանը: Սակայն այս ամենով հանդերձ՝ վերջինս արժեք էր հայ գրականության մեջ:

“La Roseraie d’Arménie” ժողովածուի երեք հատորները

Եթե Չոպանյանը տպագրեր միայն “La Roseraie d’Arménie” բարձրարժեք ժողովածուի երեք հատորները, արդեն մեծ ծառայություն մատուցած կլիներ հայ միջնադարյան քնարերգությունը միջազգային ճանաչման արժանացնելու գործում: Այս ժողովածուի 1-ին գրքի նախաբանում նա ներկայացնում է հատորներ ստեղծելու իր նպատակը: Նա խոստովանում է, որ գրքի որոշ նյութեր տպագրել է “Les Trouvères Arméniens” հատորում, որը ներկայացնում է և՛ հայ ժողովրդական երգը, և՛ հոգևորը: Հատուկ ձևով «Հայաստանի վարդաստանը» («Վարդենիկ Հայաստանի») բանասերը նկարագարում է հայ միջնադարյան մանրանկարներով. դա պետք է նպաստեր միջնադարյան գեղարվեստական մտածողության առավել ճիշտ ընկալմանը, հետևաբար՝ մեր հների գեղագիտական ընկալումների ըմբռնմանը: 1913-1914թթ. ընթացքում՝ “La Roseraie d’Arménie” ժողովածուի 1-ին գիրքն արդեն տպարանում էր, երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը: Եվ գործը չորս տարի «քնեց»՝ առանց տպագրվելու: Պատերազմն առավել վատթարացրեց հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական վիճակը, իսկ Արևմտյան Հայաստանը 1915 թիվ ապրեց: Ահա այդ ծանր, մղձավանջային իրադարձություններին ի պատասխան՝ լույսի ու խաղաղության շող դարձավ “La Roseraie d’Arménie” ժողովածուի հատորը:

Հայ միջնադարյան քնարերգության գոհարներն Ա.Չոպանյանն անվանել է «Հայաստանի վարդաստան»: Վարդը քրիստոնեական մտածողության մեջ գեղեցկագույն ծաղիկն է, այն դիտվում է Քրիստոսի խորհրդանիշներից, ինչպես արևը, ցորենը, հացը: Կերզնկացին իր այլաբանական տաղերից մեկի խորագրում նշում է՝ «Բան վարդի օրինակաւ զՔրիստոս պատմէ»: Ընդհանրապես իր բազմաթիվ հետազոտություններում Ա.Չոպանյանը հաճախ է հայ քնարերգությունը համեմատում ծաղկաստանի հետ՝ ծաղիկը դիտելով որպես գեղագիտական կատարելության խորհրդանիշ: Ինչպես երևում է առաջաբանից, հեղինակը հետազայում որոշ փոփոխության է ենթարկում՝ զայրույթի խոսք ուղղելով եղեռնագործության հեղինակներին՝ մարդկությանը լսելի լինելու ցանկությամբ: Նա ասում է, որ այս գործով կամենում է ևս մեկ անգամ ցույց տալ բանաստեղծական արվեստի ուժը: Հայաստանը դարեր ի վեր եղել է ռազմական գործողությունների թատերաբեմ: Այն, ինչ արեցին թուրքերը, ոճիր է ոչ միայն մարդկության, այլև քաղաքակրթության դեմ: Եվ ահա այս ծաղկեփունջը՝ քաղված Հայաստանի հոգևոր վարդաստանից, մեծարանք է ուղղված ցեղի հանճարին:

Ա.Չոպանյանը լավատեսորեն է նայում հայ ժողովրդի ապագային, համոզված է, որ ազատությունը կտոնի իր հաղթանակը, նահատակ ժողովուրդները կբարձրանան, կթոթափեն իրենց շղթաները, ազատ Հայաստանը կվերագտնի իր տեղը ազգերի ընտանիքում: Եվ ահա այդ խորհրդանշական վարդերը, ծնված արդարություն ու ազատություն երազող ազգի ոգուց, ինքը նվիրում է նահատակների հիշատակին, բոլոր տառապած զոհերին, մինչև որ աշխարհում կիշխեն Գեղեցիկն ու Բարին: Այս հուզառատ խոսքերը նա գրել է 1918-ի սեպտեմբերին: Իսկ “La Roseraie d’Arménie” ժողովածուի առաջին հատորը նախապես պատրաստել և նվիրել էր 14-րդ դարավերջի և 15-րդ դարասկզբի նշանավոր բանաստեղծ Առաքել Սյունեցու ստեղծագործությանը, որի միստիկ և ուսուցողական բանքերը, ինչպես և գլուխգործոցը՝ ծավալուն «Ադամգիրք» պոեմը, ֆրանսերեն թարգմանությամբ ներկայացվում են ընթերցողին:

Առաքել Սյունեցու «Աղամգիրքը» գրվել է 1401-ին և նորարարական բնույթ ուներ հայ գրականության մեջ: Նրանում «Աստվածաշունչն» է, սակայն գոյի, մարդու հոգեբանական քարացած մտածողությունից հեռացած և տրամաբանական նոր լուծումներով. վիճում են իրար հետ Աղամը և Աստված, ինչպես և՛ Եվան ու Աստված: Նրանք քննում են կյանքի ու մահվան հավերժական խնդիրը: Այս հատվածները Չոպանյանը թարգմանել է բնագրին շատ հարազատ:

“La Roseraie d’Arménie” ժողովածուի 2-րդ հատորն ավելի հարուստ բովանդակություն ունի: Այս ժողովածուի մեջ կան Ներսես Շնորհալու, Սարգսի, Կոստանդին Երզնկացու, Ֆրիկի, Գրիգոր Խլաթեցու, Զաքարիա Գնունեանցի, Հովասափ Սեբաստացու, Հովհ. Թլկուրանցու, Սիմեոն Ապարանցու, Նահապետ Քուչակի, Մովսես Եպիսկոպոսի, Մուրադ Խիկարի, Հակոբ Բատուկենցի, Բաղդասար Դպրի, Նաղաշ Հովնաթանի, Ջիվանու ստեղծագործություններից:

Ա.Չոպանյանը Ներսես Շնորհալու հանելուկների փունջը ընտրել է մեծ ճաշակով, այն տպավորությամբ, որ դրանք ֆրանսիացի և ընդհանրապես եվրոպացի ընթերցողին կհիացնեն իրենց դիպուկ փոխաբերական արվեստով: Հանելուկներից ընտրված են՝ գիրքը, արտույտը, երկինքը, ամառը, աշխարհը, արևը, գարունը, մեղուն և այլն:

Կ.Երզնկացու վերաբերյալ գրում է մի ընդարձակ նախաբան՝ ֆրանսերեն հրատարակելով մեծ թվով նրա տաղերից: Նրան շատ բարձր է գնահատում որպես այլաբանական քերթվածների հեղինակ, նշում է նաև, որ վերջինս եղել է առաջին սիրո երգիչներից:

Օտարներին նա պատմում է այն տեսիլը, որ կա Կ.Երզնկացու տաղերից մեկում, և նկարագրված է աստվածային ներշնչման պահը: Տեսիլի իրողության մասին շեշտված է հենց տաղի խորագրում. «Ոմանք չարախօսէն զինէն վասն նախանձու թե որպե՞ս խոսի սա այսպիսի բան, զի վարդապետի չէ աշակերտել, զի այլ է աշակերտելն և այլ է շնորհքն ի հոգւոյն, զոր ես պատմեմ ձեզ, յաղագս տեսլեան իմոյ զոր տեսի զարմանալի տեսիլ մինչ ի վանք հնգետասան ամաց, զոր տեսի այր մի արեգակնազգեստ եւ լի լուսով» (**Les Trouvères..., 1906**):

Այս բանաստեղծությունը քննում է հավերժական հարց. հզոր տաղանդի նկատմամբ շրջապատի նախանձը: Կերզնկացին հրաշալի ձևով գտել է դրա պատասխանը: Ինքը տասնհինգ տարեկանում աստվածային տեսիլի միջոցով ստացել է բանաստեղծելու ձիրքը: Նման աստվածատուր շնորհն այլևս հանգիստ չի տալիս մարդուն. նա անվերջ ներշնչված ստեղծագործում է:

“La Roseraie d’Arménie” ժողովածուի երկրորդ գրքում Ա.Չոպանյանը մանրամասն գրում է Խ.Կեչառեցու մասին, որը նրա սիրելի հեղինակներից է: Հիշատակում է և բնորոշում Խ.Կեչառեցու պատվիրած մի ողբի մասին, որը պետք է գրեր նրա խնդրանքով ժամանակի նշանավոր դեմքերից մեկը՝ Ստեփանոս Օրբելյանը:

Ա.Չոպանյանը մի առանձին սիրով խոսում է Խ.Կեչառեցու՝ Ալ.Մակեդոնացու պատմության համար գրած կաֆաների մասին, որոնք հարստացրել են այդ պատմության հայկական խմբագրությունը: Նրա կարծիքով, Ալեքսանդրի պատմության այդ օրինակը, որը ճոխացել էր Խաչատուր Կեչառեցու կաֆաներով, միջնադարյան հայերի մոտ ունեցել է մեծ հաջողություն (**La Roseraie..., 1923**):

Երկրորդ հատորում բազմակողմանի վերլուծված է նաև Ֆրիկի քնարերգությունը: Ֆրիկի կենսագրության շարադրանքում Ա.Չոպանյանը հետևում է այդ հեղինակի լավագույն գիտակի՝ Տիրայր Եպիսկոպոսի եզրակացություններին: Նա ևս համոզված է, թե Ֆրիկին երբեք չի կարելի նույնացնել Խ.Կեչառեցու հետ. նրանք պատմական նույն ժամանակահատվածի մարդիկ են, բայց բոլորովին տարբեր անձեր են: Ըստ Ա.Չոպանյանի՝ Ֆրիկը լուրջ կրթություն չի ստացել: Նա կրկնում է Տիրայր Եպիսկոպոսի վարկածը, ըստ որի՝ Ֆրիկը Սյունիք նահանգից էր՝ ծնված 1230-40 թթ. միջև, վախճանված 1305-1310թթ. շրջանում: Չոպանյանն առանձնացնում է բանաստեղծական այն հատվածները, որոնցում Ֆրիկը ներկայացնում է ապրած ժամանակը և իր կենսագրությունը: Բանասերը հիացած է Ֆրիկի՝ իր ժամանակին տված սպառիչ բնութագրմամբ:

Ա.Չոպանյանի համար հատկապես էական է, որ Ֆրիկը կարծես ասել է բոլոր ժամանակների համար: Հայերն աստվածապաշտ են. երկրպագում են սուրբ խաչը, գտնում է նա, բայց ենթարկվում են ամենադաժան տառապանքների. մարդը ո՛չ պղնձի արծան է, ո՛չ էլ վայրի խոտ, որ կրակով այրեն.

Գիտես մարմին եմք մըսեղի,
Գեմ արծան չեմք կամ խոտ վայրի,
Որ խանձարկեալ ես կըրակի,
Ձերթ զանդաստանս փըշաբերի
Կամ մացառաց ինչ պուրակի:

Նա համակարծիք է Ֆրիկին, որին հուզել են կյանքի տառապեցնող անհավասարությունները. կարծես ամեն ինչ բաշխված է կամայական, թե՛ իրական կյանքի ժամանակը, թե՛ հարստությունը, թե՛ բարու և չարի խնդիրները, որոնք անհասկանալի են բանական մարդու համար: Նա անտանելի ու ծայրահեղ տարբերակված մարդկային ճակատագրերի համար բերում է խոսուն ու բևեռացված հակադրությամբ լի անմոռաց ու ճշգրիտ օրինակներ:

Ա.Չոպանյանը խոսում է Ֆրիկի մի բանաստեղծության մասին, որ ինքը գտել է Բրիտանական թանգարանում պահվող հայկական ձեռագրական ժողովածուի մեջ՝ թիվ 107-ի տակ (**La Roseraie..., 1923**):

Ա.Չոպանյանը Ֆրիկից թարգմանաբար զետեղում է բավական թվով աշխարհիկ և հոգևոր տաղեր: Նա իրավացիորեն շեշտում է հոգևոր տաղերի կատարելությունը. «Ամենագեղեցիկը, ամենապայծառը Ֆրիկի այն տաղերն են, ուր ներկայացվում է նրա միստիկ կապն Աստծու հետ. այս տեղում նրա բանաստեղծությունը շատ գեղեցիկ է»: (**La Roseraie..., 1923**):

“La Roseraie d’Arménie” ժողովածուի 3-րդ հատորը լույս տեսավ 1929-ին: Այստեղ կան Ֆրիկի, Կ.Երզնկացու, Հովհ.Թլկուրանցու, Ա.Սյունեցու, Ա.Բաղիշեցու, Գր.Աղթամարցու, Հովասափ Սեբաստացու, Ստեփաննոսի, Սարկավագ Բերդակեցու, Հովհ.Եպիսկոպոսի, Դավիթ Սալաձորեցու տաղերը:

Հատորի առաջաբանում Ա.Չոպանյանը, անդրադառնալով առաջին երկու գրքերին, ասում է, թե նոր գիրքը գալիս է լրացնելու շատ բան, և նրանում շատ են միջնադարյան նկարազարդումները: Ինչ-որ առումով այս գիրքը նվիրված է նաև հայ միջնադարյան մանրանկարչությանը:

Մանրանկարչությունը հայերի մոտ ունեցել է խորհրդանշական բազմաթիվ դրսևորումներ: Հայկական արվեստը համաշխարհային արվեստի պատմության մեջ իր արժանի տեղը դեռ չի զբաղեցնում. այսպես է կարծում Ա.Չոպանյանը: Քաղաքական ծանր վիճակը, որի մեջ հայտնվեց երբեմնի հզոր և ծաղկուն ազգը, նրա արվեստն աշխարհի առաջ մոռացության մատնեց: Սակայն հին պարսկական, արաբական, բյուզանդական արվեստների կողքին կա գեղեցկության մի աշխարհ, ողջ միջնադարում զարգացում ապրած զուտ հայկական մանրանկարչությունը, որի մեջ միաձուլված են արևելյան ոգին և արևմտյան միտքը:

Ա.Չոպանյանը վկայակոչում է անվանի բյուզանդագետ Ստրժիգովսկուն, որն ուսումնասիրել է հայ արվեստը և այն բարձր է գնահատել իր կարևոր աշխատության երկու գրքերում՝ “Die Baokunsts der Armenier und Europa”. Չոպանյանը նշում է նաև, որ “La Roseraie d’Arménie” ժողովածուի 2-րդ հատորը կարդալուց և նրանում եղած արվեստի գործերի կրկնօրինակները տեսնելուց հետո, հատկապես Հայաստանի ճարտարապետական հուշարձանների նկարները դիտելով, Անտուան Բուրդելն իրեն գրել է. «Ճարտարապետական Հայաստանը, այնպիսին, ինչպիսին ես տեսայ “La Roseraie...” գրքում, դասում է իմ մտքում այն գործերի շարքում, որոնք աշխարհում ամենից շատ են սիրում» (**La Roseraie..., 1923**): Նա խոսում է նաև Կարսի թագավոր Գագիկի «Աւետարանի» մասին, որը 11-րդ դարի կեսի ձեռագիր է և պահվում է Երուսաղեմի Ս.Հակոբյանց վանքում. «Կարսի թագավորի ձեռագիրը գունանկարային արվեստի ամենաբարձր դրսևորումներից մեկն է» (**La Roseraie..., 1923**): Նկատենք, որ այդ ձեռագիրը որոշ չափով վնասվել է, մասամբ ժամանակից և մասամբ էլ վատ պահվելուց, մինչև հանգրվանել է Ս.Հակոբյանց վանքում:

Ա.Չոպանյանը գիտականորեն հայ մանրանկարչությունը բաժանում է զարգացման երեք շրջանների:

Գիտնականի կազմած երրորդ ժողովածուն հիրավի ավելի հարուստ է ու բազմազան: Նրանում հանդես են գալիս ոչ միայն հայ միջնադարյան գրականությունը ներկայացնող դեմքերը, այլև բանաստեղծներ, որոնցից հասել են մեկ-երկու տաղեր, և նրանց կենսագրությունն անհայտ է, բայց գրել են ժամանակի գեղագիտական պահանջի համեմատ ուշագրավ գործեր: Դրանցից են՝ Ստեփանոսի «Գարուն եւ աշուն» տաղը, որը քաղված է Ա.Տևկանցի «Հայերգ»-ից, «Գովասանութիւն թռչնոց» տաղը: Վերջինս Կ.Կոստանյանցի մոտ կոչվում է «Վասն թռչնոց»: Տաղում դիպուկ են թռչուններին տրված բնորոշումները:

Ա.Չոպանյանը հնարավորինս ամփոփ բանասիրական տեղեկություններ է հայտնում տաղերի հեղինակների մասին: Այսպես, Դ.Սալաձորեցու «Գովասանություն ծաղկանց» տաղի մասին գրում է, թե այդ բանաստեղծը հայ գրականությանը ծանոթ է միայն իր այս տաղով, որը նվիրված է Հայաստանի ծաղիկներին: Տաղի լավագույն բնագիրը հրատարակել է Նորայր Բյուզանդացին 1901-ին «Բանասէր»-ում, հետո այն բազմիցս հրապարակել է:

“La Roseraie d’Arménie” երրորդ հատորի վերջին հատվածում կա «Անանուն երգեր» բաժինը, որտեղ ընդգրկված են ժողովրդական երգեր՝ նվիրված կաքավին, աղվեսին, աղավնուն: Դրանց մեջ է նաև հանրահայտ «Կաքավի ողբը», ուր որդեկորույս ու սգավոր կաքավը խորհրդանշում է Հայաստանը:

“La Roseraie d’Arménie” երրորդ հատորի առաջաբանը Ա.Չոպանյանն ավարտում է հետևյալ եզրահանգմամբ. «Բանաստեղծությունների այս խումբը ներկայացնում է միջնադարի արևելյան քրիստոնեության հայկական դրսևորումը: Սրանք մեր ազգային քնարերգության առավել յուրօրինակ ու ինքնատիպ արտահայտություններն են, գուցե նաև մարդկային սրտի առավել թանկ քնարական հայտնություններից են»:

1935-ին է լույս տեսել ֆրանսիացի երեք դասական գրողներին՝ Վիկտոր Հյուգոյին (1802-1885թթ.), Ֆրանսուա Շատոբրիանին (1768-1848թթ.), Ալֆոնս Լամարտինին (1790-1869թթ.) նվիրված աշխատությունը:

Չոպանյանն ունեցել է Հյուգոյի պաշտամունք: Նա ներկայացնում է Վ.Հյուգոյի ջերմ խոսքը՝ ուղղված հայ ընթերցողին: Հայերը ողջ Արևելքում առաջին ազգն են, որ թարգմանել են Շեքսպիրին ու Հյուգոյին: Չոպանյանը չի մոռանում շեշտել, որ Հյուգոն Շեքսպիրի հետ օտար բանաստեղծներից եղել է հայերի ամենասիրելին (**Չոպանյան Ա., 1988**): Չոպանյանի “Victor Hugo, Chateaubriand et Lamartin dans la litterature Arménienne” գիրքը պարունակում է շատ բազմազան ու հարուստ նյութեր, որոնք օգտակար են և՛ հայ գրականագետներին, և՛ ֆրանսերենով կարդացող բանասերների համար: Չմոռանանք նաև, որ Շեքսպիրի, Գյոթեի, Հյուգոյի կողքին հավասարի իրավունքով Չոպանյանը դրել է նաև հանճարեղ Գրիգոր Նարեկացուն:

Հայ ժողովրդի պատմական առաքելության դրվագներից է Աստվածաշնչի՝ Ոսկեդարի հոյակապ թարգմանությունը: Այդ դարակազմիկ և ճակատագրական իրողության 1500-ամյա հոբելյանը Չոպանյանը մեծ շուքով տոնակատարեց Փարիզում՝ 1936-ին: Հանդիսության ժամանակ հայ նշանավոր գիտնականների հետ՝ Ն.Ադոնց, Գ.Լևոնյան և ուրիշներ, ելույթ ունեցան նաև օտարազգի գիտնականներ: Նշանավոր բյուզանդագետ Շառլ Դիլլ և լեզվաբան Անտուան Մեյեն հանդիսությանն ուղարկել էին իրենց ջերմ նամակները, որոնք ընթերցվեցին և հետո հրատարակվեցին 1938-ին հանդիսության զեկուցումները պարունակող ժողովածուում:

Իր նամակում Շառլ Դիլլ փաստերով ապացուցում է, թե ինչպես հայ եկեղեցաշինական ճարտարապետությունն ազդել է բյուզանդականի վրա՝ հատկապես Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարի և Ռավենայի Saint Vital եկեղեցու ճարտարապետությունը մաքուր հայկական է (“...Sainte Sophie de Constantinople et Saint-Vital de Ravenne sont des églises purement arméniennes...”): (**Célébration..., 1938**) Դիլլ խոսում է Անիի Մայր տաճարի,

Հռիփսիմների և Զվարթնոցի հոյաշեն տաճարների, Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու, Թալիշի, Թալինի, Մարմաշենի, Գոշավանքի եկեղեցիների մասին: Նա համոզված է, որ Կիևի Սուրբ Սոփիայի տաճարը կառուցվել է հայկական ճարտարապետության ազդեցությամբ, անշուշտ ճարտարապետը հայ է եղել **(Célébration..., 1937)**: Չի մոռանում նշել, թե X դարում Բյուզանդիայի կայսր Վասիլ Երկրորդը Անիի ճարտարապետ Տրդատին կանչել է Սուրբ Սոփիայի տաճարի գմբեթը վերանորոգելու: Դիլը համոզված է, որ Արևելքում ապրում է մի ազգ, որը ունի փառահեղ էջեր և մնալու է մարդկության պատմության նեջ:

Անտուան Մեյեն, որը հայ գրերի պատմության գիտականներից է, վերստին կրկնում է իր այն միտքը, թե Մաշտոցի ստեղծած այբուբենը իսկական գլուխգործոց է, որը հայերին ծառայում է ստեղծման օրից մինչև նոր օրերը **(Célébration..., 1937)**:

Ֆրանսերենով 1945-ին հրատարակվել է Չոպանյանի *La nation Arménienne et son œuvre culture*” աշխատությունը, որն անշուշտ նվիրված է 1915 թվականի հայերի ցեղասպանության 30-ամյա հիշատակի տարելիցին: Նրանում պատկերված են օտարազգի ականատեսների վկայությունները ցեղասպանության սահմուկեցուցիչ դրվագների մասին: Միաժամանակ նա համաշխարհային ճարտարապետության պատմության տեսաբաններ Յոզեֆ Ստրիհգովսկու (1862-1941թթ.) և Շառլ Դիլի (1859-1944թթ.) ընձեռած գիտական փաստերով ներկայացնում է Եվրոպայի նշանավոր տաճարների, այդ թվում նաև Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարի վրա հայկական ճարտարապետության թողած ազդեցությունը **(La nation..., 1945)**:

Այսօր գիտական աշխարհը Չոպանյանին է պարտական 1946-ին Փարիզում ֆրանսերենով լույս տեսած Նիկողայոս Ադոնցի «Քննական պատմություն Հայոց» կոթողային աշխատության լույս ընծայման համար: Այդ աշխատության սկզբում դրված է ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռընե Գրուսեի հիացական առաջաբանը, որում փաստացի հաստատվում է Ուրարտուի Հայաստան լինելը,

նաև Տիգրան Մեծի՝ աշխարհի նշանավոր պետական գործիչ լինելու իրողությունը
(Ադոնց Ն., 2009):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շուրջ 50 տարի Արշակ Զոպանյանը ֆրանսերենով լույս տեսած գրքերով ու հոդվածներով համայն աշխարհին ներկայացրել է Հայաստանի գրական գանձերը, որոնք ունեն ոչ միայն ազգային, այլև համամարդկային արժեք:

Զոպանյանը հատկապես հայ հին և միջնադարյան քնարերգության ֆրանսերեն թարգմանություններով միջազգային հանրությանը ներկայացրեց հայ քնարերգության հարուստ գանձարանը, որը հիմք դարձավ տարբեր ազգերի հայագետների ուսումնասիրությունների համար:

Մեծ հայրենասերի ու հետազոտողի ուսումնասիրությունները գրված են անտիկ ու եվրոպական գրականությունների իմացության հարուստ պաշարի հիման վրա:

Անգլագական հայրենասերը 1915թ. կորած հայրենիքի փոխարեն ստեղծել է մի հզոր հոգևոր Հայաստան, ուր Արևմտահայաստանը՝ վերածնված իր գաղթօջախներով, և փոքրացած Մայր Հայաստանը հանդես են գալիս միասնական ու հզորացած՝ խոսքի ուժով իրենց մշակութային հին տարածքները վերագտած:

Հայ գրականությունը Եվրոպային ու աշխարհին ներկայացնելու համար Ա.Զոպանյանն իրեն զինակից է ընտրել ֆրանսիացի Նոբելյան մրցանակի դափնեկիրների, Ֆրանսիայի ակադեմիայի անդամների, ինչպիսիք են՝ Անատոլ Ֆրանսը, Ֆրեդերիկ Միստրալը, Ռժնե Գրուսեն, Պոլ Ադամը, Գաբրիել Մուրեն և ուրիշներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ադոնց Ն. (2009)**, Երկեր, հ. Դ, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Ավագյան Վ. (2022)**, Արշակ Զոպանյանի կյանքի ու գործունեության նկարագիրը, «Պատմաբանասիրական հանդես», № 2, Երևան:

3. **Դավաթյան Կ. (1987)**, Արշակ Չոպանյան, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
4. **Դոլուխանյան Ա. (2004)**, Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը, Երևան, «Զանգակ – 97» հրատ.:
5. **Չոպանյան Ա. (1980)**, Նամականի. հատորը կազմեց և ծանոթագրեց Գոհար Ազնավորյանը, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
6. **Չոպանյան Ա. (1988)**, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
7. **Célébration solennelle du quinzième centenaire de la traduction Arménienne de la Bible (1938)**, Paris.
8. **Chants populaires Arméniens (1903)**, Paris.
9. **La France et la peuple arménien (1916)**, Paris.
10. **Le Trouvère** Nagach Hovnathan et le peintre Hovnathanian (1910), Paris.
11. **Les Trouvères** Arméniens, Traduction française avec une intraduction par Archag Tchobanian (1906), Paris.
12. **La Roseraie d'Arménie (1918)**, t.I, Paris.
13. **La Roseraie d'Arménie (1923)**, t.I, Poèmes, t.II, Paris.
14. **La Roseraie d'Arménie (1929)**, t.III, Paris.
15. **La nation arménienne** et son œuvre culturelle (1945), Paris.
16. **Le Cinquantenaire** de la mort du poète arménien Bédros Tourian (1922), Paris.
17. **L'Arménie** son histoire, sa littérature, son rôle en Orient (1897), Paris.
18. **Poèmes** Arméniens Anciens et Moderns (1902), Paris.
19. **Victor Hugo** (1935), Chateaubriand et Lamartine dans la littérature arménienne, Paris.
20. **Poezia Armenii** s drevnejshikh vremjen do nashikh dnei pod redaktsiej, so vstupitel'nom ocherkom i primechanijami V. Brusova (1987), Yerevan.

REFERENCES

1. **Adonts N. (2009)**, Yerker. h. D, Yerevan, YSU Publishing House.
2. **Avagyan V. (2022)**, Arshak Chopanyani kyanqi ow gorc'owneowt'yan nkaragiry' /Description of the life and work of Arshak Chopanyan/, "Patmabanasirakan handes", № 2, Erevan.
3. **Dallakyan K. (1987)**, Arshak Chopanyan /Arshak Tchobanyan/, Yerevan. "Sovetakan grogh" publishing house.
4. **Dolukhanyan A. (2004)**, Arshak Chopanyany' ev hay hin grakanowt'yowny' /Arshak Chopanyan and ancient Armenian literature/, Yerevan, "Zangak - 97" publishing house.
5. **Tchobanyan A. (1980)**, Namakani. hatory' kazmec & c'anut'agrec Gohar Aznavoryany' /Collection of Letters: the volume was compiled and annotated by Gohar Aznavoryan/, Yerevan, "Sovetakan grogh" publishing house.
6. **Tchobanyan A. (1988)**, Yerker, Yerevan, "Sovetakan grogh" publishing house.
7. **Célébration solennele du quinzième centenaire de la traduction Arménienne de la Bible (1938)**, Paris.
8. **Chants populaires Arméniens (1903)**, Paris.
9. **La France et la peuple arménien (1916)**, Paris.
10. **Le Trouvère** Nagach Hovnathan et le peintre Hovnathanian (1910), Paris.
11. **Les Trouvères** Arméniens, Traduction française avec une intraduction par Archag Tchobanian (1906), Paris.
12. **La Roseraie d'Arménie (1918)**, t.I, Paris.
13. **La Roseraie d'Arménie (1923)**, t.I, Poèmes, t.II, Paris.
14. **La Roseraie d'Arménie (1929)**, t.III, Paris.
15. **La nation arménienne** et son œuvre culturelle (1945), Paris.
16. **Le Cinquantenaire** de la mort du poète arménien Bédros Tourian (1922), Paris.

17. **L'Arménienne** son histoire, sa littérature, son rôle en Orient (**1897**), Paris.
18. **Poèmes** Arméniens Anciens et Moderns (**1902**), Paris.
19. **Victor Hugo**, Chateaubriand et Lamartine dans la littérature arménienne, Paris, 1935.
20. **Poezia Armenii** s drevnejshikh vremjen do nashikh dnei pod redaktsiej, so vstupitel'nom ocherkom i primechanijami V. Brusova (**1987**), Yerevan.

Aelita Dolukhanyan, Lilit Poghosyan

Internalization of Armenian Historiography and Culture through the Efforts of Arshak Chobanyan

Conclusion

Key words and expressions: *A. Chobanyan, genocide, Armenian poetry, translation, patriotism, international value, A. France, Ch. Diehl, A. Meillet.*

For 50 years, Arshak Chobanyan presented to the world the treasures of Armenian literature, which are not only of national but also of universal value, through books and articles published in French.

Through the translations of ancient and medieval Armenian poetry into French, A. Chobanyan introduced the world community to the treasury of Armenian poetry, which served as the basis for research by the specialists in Armenian Studies of different nationalities.

The works of the great patriot and researcher are based on the knowledge of a huge layer of ancient and European literature. A. Chobanyan, who loved his motherland infinitely, created a powerful spiritual Armenia in place of the motherland lost in 1915, where Western Armenia - with its revived colonies and the territorially reduced Armenia act as a united and powerful country that has regained its ancient cultural territories owing to the power of the word.

In order to present Armenian literature to Europe and the world, A. Chobanyan chose as his associates French Nobel Prize winners, members of the French Academy,

such as Anatole France, Frederic Mistral, Rene Grousset, Paul Adam, Gabriel Moure and others.

Աэлита Долуханян, Лилит Погосян

Интернализация армянской историографии и культуры усилиями

Аршака Чопаняна

Заключение

Ключевые слова и выражения: А. Чопанян, геноцид, армянская поэзия, перевод, патриотизм, международная ценность, А. Франс, Ш. Диль, А. Мейе.

На протяжении 50 лет Аршак Чопанян посредством изданных на французском языке книг и статей представлял миру сокровища армянской литературы, являющие собой не только национальную, но и общечеловеческую ценность.

Благодаря переводам на французский язык образцов древней и средневековой армянской поэзии А. Чопанян ознакомил мировую общественность с сокровищницей армянской поэзии, что послужило основой для исследований арменоведов разных национальностей.

Труды великого патриота и исследователя созданы на базе знания огромного пласта античной и европейской литературы. Безгранично любивший родину А. Чопанян, взамен утерянной в 1915 г. родины, создал могущественную духовную Армению, где Западная Армения – с ее возрожденными колониями, и территориально урезанная Армения выступают в качестве единой и могущественной, обретшей свои древние культурные территории благодаря силе слова.

С целью представления армянской литературы Европе и миру А. Чопанян избрал своими соратниками французских лауреатов Нобелевской премии, членов французской академии, каковыми являлись Анатоль Франс, Фредерик Мистраль, Рене Груссе, Поль Адам, Габриэль Мурр и другие.

Աելիտա Դոլուխանյան - Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 37 գրքի և շուրջ 780 հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com

ORCID ID <https://orcid.org/0000-0001-9526-9464>

Լիլիթ Պողոսյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի մագիստրոս: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան գրականություն, բանահյուսություն: lilitpoghosyan@gmail.com

Аэлита Долуханян - Член корреспондент НАН РА, доктор филологических наук, профессор, зав.кафедрой древнеармянской и средневековой армянской литературы и методики ее преподавания АГПУ им. Х.Абовяна. Научные интересы: древнеармянская и средневековая армянская литература, устное народное творчество, современная армянская литература, методика преподавания литературы, литературная критика, арменоведение, литературные связи. Автор 37 книг и более 780 статей. aelita.dolukhanyan@gmail.com

ORCID ID <https://orcid.org/0000-0001-9526-9464>

Лилит Погосян - Студентка первого курса магистратуры по специальности «Армянский язык и литература» филологического факультета АГПУ имени Хачатура Абовяна. Научные интересы: античная и средневековая литература, фольклор. lilitpoghosyan@gmail.com

Aelita Dolukhanyan - Doctor of Sciences in Philology, Professor, Correspondent Member of the NAS RA, Chair of the Department of Ancient and Medieval Armenian Literature and its Teaching Methodology at the ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Ancient and Medieval Armenian Literature, folklore, contemporary Armenian Literature, methodology of teaching literature, literary criticism, Armenology, literary connections, Author of 37 books and over 780 articles.

aelita.dolukhanyan@gmail.com

ORCID ID <https://orcid.org/0000-0001-9526-9464>

Lilit Poghosyan - Student of the 1st course of the master's program in the specialty of "Armenian Language and Literature" at the Faculty of Philology of the Khachatur Abovyan ASPU. Scientific interests: ancient and medieval literature, folklore. lilitpoghosyan@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 18.01.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 30.01.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.